# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, գ.Շինուհայր, (0284) 95530 tatev.syuniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 ՓԵՏՐՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ N 03-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ(ՏԱԹԵՎ ԲՆԱԿԱՎԱՅՐ) ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ «ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ» ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0.0012 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԻ ( ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ՝ 09-097-0116-0030) ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետով, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 3-րդ հոդվածի 1-ին մասով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2001 թվականի օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված <<Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի>> 2021 թվականի մայիսի 19-ի N 155 դրական եզրակացությունը, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի կողմ-8 , դեմ-0 , ձեռնպահ-0 քվեարկության արդյունքներով, համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի (Տաթև բնակավայր) վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող, համաձայն հավելվածի՝ 0.0012 հա «Բնակավայրերի» նպատակային նշանակության այլ հողը՝( կադաստրային ծածկագիր՝ 09-097-0116-0030), փոխադրել «Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների» հողեր կատեգորիա՝ «Էներգետիկայի հողեր» գործառնական նշանակությամբ՝ էլեկտրաէներգիայի բաշխման կայան տեղադրելու նպատակով:

2.Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՍԵՎԱԿ

ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ՊԱՐՈՒՅՐ

ԳԵՐԱՍԻՄՅԱՆ ՄԱՐԱՏ

ԼԱԼԱՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՄԻՆԱՍՅԱՆ ԴԻԱՆՆԱ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՍՅԱ

ՎԼԱԴԻՄԻՐՅԱՆ ՆԱՌԱ

ՓԱՐՍՅԱՆ ԵԳՈՐ

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *ՍԱՄՎԵԼ ԼԱԼԱՅԱՆ*

# ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱԹԵՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ <<ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ>> ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,0012 ՀԵԿՏԱՐ ԱՅԼ ՀՈՂԸ ՓՈԽԱԴՐԵԼ <<ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ, ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԿԱՊԻ ԿՈՄՈՒՆԱԼ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ >> ՀՈՂԵՐ ԿԱՏԵԳՈՐԻԱ՝ <<ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՀՈՂԵՐ>> ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ**

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության <<Հողային օրենսգրքի>> 3-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված օրենսդրական պահանջները:

Վերը նշված հողատարածքում հետագայում նախատեսվում է տեղադրել ևս մեկ էլեկտրաէներգիայի կայան, քանի որ բնակավայրում առկա էլեկտրաէներգիայի կայանները իրենց հզորությամբ չեն բավարարում համայնքի ազգաբնակչության օրեցօր աճող էներգետիկ պահանջները:

**Համայնքապետարանի աշխատակազմի**

**առաջատար մասնագետ՝** Է. ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

**09 .02.2022թ.**